№ 09/3-Ե23-203 «07» Մարտի 2023թ. Էջ 1/1
Փաստաթղթի հերթական համար Փաստաթղթի ստեղծման ամսաթիվ

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ ՌԱԴԻՈԿԱՅԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌՖԵ/ՌԼ
ԻՆԿ.-Ի ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ լրագրող
Նաիրա Բուլղադարյանին

Հարգելի Նաիրա Բուլղադարյան,

Ի պատասխան Ձեր 21.02.2023 թ. հարցման, որով խնդրել եք հայտնել, թե «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) 2022 թ. հոկտեմբերին ինչ սակագներ և ինչ կոնկրետ պայմաններ է առաջարկել Ներքին գործերի նախարարությանը ԱՊՊԱ և ԿԱՍԿՈ տեսակի ապահովագրության համար, նախ ընդգծենք, որ 2022 թ. հոկտեմբերին դեռևս կազմավորված չի եղել Ներքին գործերի նախարարությունը, հետևաբար վերջինիս կողմից չէր կարող դիմում ներկայացվել Ընկերությանը:

Հայտնում ենք նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1002-րդ հոդվածի համաձայն՝ **«Ապահովագրողն իրավունք չունի հրապարակելու իր մասնագիտական գործունեության արդյունքում ապահովադրի, ապահովագրված անձի և շահառուի մասին իրեն հայտնի դարձած տեղեկությունները: Ապահովագրողը ապահովագրության գաղտնիությունը խախտելու համար, կախված խախտված իրավունքների տեսակից և (կամ) դրանց խախտման բնույթից, պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով»:**

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 112-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ապահովագրողը, վերաապահովագրողը, ապահովագրական միջնորդություն իրականացնող անձն և Բյուրոն, ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին սույն օրենքին համապատասխան տրամադրում են միայն դատարանի որոշման հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան»:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Ձեր կողմից պահանջված՝ «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերության կողմից իր մասնագիտական գործունեության արդյունքում ձեռք բերված տեղեկությունները հանդիսանում են ապահովագրական գաղտնիք, իսկ այդ տեղեկությունների գաղտնիության պահպանումը «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲ ընկերության համար հանդիսանում է օրենսդրորեն ամրագրված պարտավորություն, հայտնում ենք, որ Ձեր

կողմից պահանջված տեղեկությունները երրորդ անձանց չեն կարող տրամադրվել առանց համապատասխան դատարանի որոշման:

Միաժամանակ տեղեկացնենք, որ 2022 թ. հոկտեմբեր ամսին «ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ-ին համապատասխան պետական մարմինը դիմել է միայն Կասկո ապահովագրատեսակի գծով գնառաջարկի ներկայացման համար: Գնառաջարկով ներկայացված տեղեկատվությունը, այդ թվում՝ պետական մարմնին առաջարկված սակագինը և հավելյալ պայմանները, հանդիսանում են ապահովագրական գաղտնիք և հրապարակման ենթակա չեն ապահովագրական Ընկերության կողմից:

Այնուամենայնիվ նշենք, որ Ձեր կողմից հարցված տեղեկատվությունը հրապարակվել է նաև Ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանի կողմից ՀՀ կառավարության 16.02.2023թ.հեռարձակված նիստի ժամանակ, որպիսի տեղեկատվությունը համապատասխանում է իրականությանը:

«ՍԻԼ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՓԲԸ

Գործադիր տնօրեն

Արմինե Մելքոնյան